



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2018 թվականի №---Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի №317Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՌԵՊ ՔԱՌ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի հունիսի 19-ին «ՌԵՊ ՔԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով ութ ամիս ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ՌԵՊ ՔԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արսան-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №317Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Արսան-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0608 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0608 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը.

բ) Ընկերությունը 2018 թվականի մայիսի 2-ի №7/18 գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել «Արսան-2» արևային էլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, որի համաձայն փոփոխվել են էլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշները, մասնավորապես՝ ԼԷ №0608 լիցենզիայի պայմաններով ամրագրված արևային վահանակների քանակը և հզորությունը,

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականի սեպտեմբերի 26-ին

տեղի է ունեցել Ընկերության մասնակցների փոփոխություն՝ Ընկերության 100 տոկոս բաժնեմասի օտարամաբ, ինչի վերաբերյալ Ընկերությունը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չի տեղեկացրել Հանձնաժողովին.

դ) Հանձնաժողովը 2018 թվականի հունիսի 26-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով.

ե) Ընկերության մասնակիցների փոփոխության պահին՝ 2017 թվականի սեպտեմբերի 26-ին, գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ կետի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր,
- 2) 4-րդ կետի համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք նշված հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են Հանձնաժողովին.

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի հունիսի 27-ի գրությամբ կատարված խախտումը պատճառաբանել է որպես օրենքի չիմացության հետևանք.

է) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է մասնակիցների փոփոխության պահին գործող «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետը՝ 100 տոկոս բաժնեմասի վաճառքի գործարքի վերաբերյալ գրավոր չի տեղեկացրել Հանձնաժողովին, և

ը) չնայած այն հանգամանքին, որ սույն թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձանց

կողմից գործարքների իրականացման մասին Հանձնաժողովին տեղեկացնելու պահանջ այլևս ամրագրված չէ, մինչդեռ նշված փոփոխություններով նախատեսված չէ դրանց հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ, հետևաբար Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով վերը նշված՝ Ընկերության իրավական վիճակը բարելավող փոփոխությունը հետադարձ ուժ ունենալ չի կարող, և կատարված խախտման համար Ընկերությունը ենթակա է պատասխանատվության,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ութ ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0608 լիցենզիայով ամրագրված «Արսան-2» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ՌԵՊ ՔԱՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արսան-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №317Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի հուլիսի 12-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի մարտի 12-ը» բառերով:
2. ԼԷ №0608 լիցենզիայի պայմանների 7-րդ կետում «330» թիվը փոխարինել «275» թվով, իսկ «3000» թիվը՝ «3960» թվով:
3. Ընկերությանը՝ ԼԷ №0608 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Արսան-2» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
- 3) մեկամսյա ժամկետում «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 2-ի №COD/0516 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

- 4) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի ապրիլի 26-ը գործողության ժամկետով:
4. 2017 թվականի սեպտեմբերի 26-ի գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
5. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ 1-ին և 3-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հուլիսի 12-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2018թ.